

Դավիթ Կարապետյան

ԱՇՈՑՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ ԸՍՏ ՎԱՆՈՒՇՏԻ ԲԱԳՐԱՏԻՈՆԻԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Բանալի բառեր - Վախուշտի, պատմություն, պատմական աշխարհագրություն, Աշոցք, բնակչություն, Տաշաղան, վրացական աղբյուրներ, թուրքական աղբյուրներ, էթնիկ խումբ:

Հայոց պատմության և Հայաստանի պատմական աշխարհագրության ուսումնասիրության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն օտար աղբյուրները: Այդ աղբյուրների դերը հատկապես մեծ է այն ժամանակափուլերում, երբ հայ ժողովուրդը զուրկ էր պետականությունից: Նման ժամանակաշրջան է 17-18-րդ դարերը: Այս ժամանակահատվածում թուրք-պարսկական լծի պայմաններում գիտության, այդ թվում պատմագրության զարգացման համար անհրաժեշտ պայմանները բացակայում էին: Որպես հետևանք այս ժամանակաշրջանի մասին հայկական աղբյուրների կողմից հաղորդվող տեղեկությունները սահմանափակ են:

Մյուս կողմից 17-18-րդ դարերը Հայաստանում և ողջ Հարավային Կովկասում արևմտյան ճանապարհորդների և միսիոներների ակտիվության վերելքի փուլ էր: Որպես արդյունք ունենք բազմաթիվ ինչպես եվրոպացի, այնպես էլ ռուս ճանապարհորդների վկայություններ թե՛ Հայաստանի և թե՛ ողջ տարածաշրջանի մասին¹:

Այլ էր իրավիճակը հարևան Վրաստանում: Չնայած կենաց ու մահու պայքարին՝ պետականության գոյությունը նպաստում էր պատմագիտության զարգացմանը: Այս շրջանի խոշորագույն վրացի գիտնականներից էր Վախուշտի Բագրատիոնին (մոտավորապես 1696-1757 թթ.)²: Վերջինս Վրաստանում պատմագրությունը հասցրեց լրիվ նոր գիտական մակարդակի: Անուրանալի է նրա դերը նաև Վրաստանի և ողջ տարածաշրջանի պատմական աշխարհագրության ուսումնասիրության գործում: Նա իր «Պատմություն» և «Աշխարհագրություն»³ աշխատություններում հանգամանալից անդրադարձել է նաև Հայաստանի՝ Վրաստանի վարչական կազմի մեջ գտնվող հատվածի քաղաքական իրավիճակին, էթնիկ կազմին, պատմական աշխարհագրությանը:

Հեղինակը ակտիվորեն մասնակցում էր Վրաստանի քաղաքական կյանքին: Հիշարժան է այն հանգամանքը, որ Վախուշտին 1722 թ. փաստացի ղեկավարել է Վրաստանը Վախթանգ արքայի և Բաքար արքայազնի՝ Գանձակում եղած ժամանակ, որտեղ նրանք սպասում էին ռուսական բանակի ժամանմանը⁴:

Արդ անդրադառնանք նրա՝ Հյուսիսային Հայաստանի նկարագրությանը: Աշոցքի մասին Վախուշտին հաղորդում է. «Իսկ Տաշիրը Աբոցից⁵ ու Բերուջը¹ Փամբակից

¹ Տե՛ս Полиектов М., Европейские путешественники в 13-18 вв. по Кавказу, Тифлис, 1935, с. 19.

² Տե՛ս Вахушти Багратиони, История Царства Грузинского, перевод Н. Т. Накашидзе, Тбилиси, 1976, с. 8.

³ Վախուշտիի աշխարհագրական աշխատանքը հիմնականում նվիրված է Վրաստանին և դիտվում է որպես հավելում նրա հիմնական պատմական աշխատանքի: Աշխատանքի ձեռագիր բնօրինակում աշխարհագրական մասերը հաջորդում են պատմական մասերին՝ դրանց ընկալումը հեշտացնելու համար: Վախուշտիի աշխատանքի առաջին ուսումնասիրող Մ. Բրոսսեն նշում է, որ աշխատանքը բաղկացած է լիովին անկախ և ինքնուրույն երկու՝ պատմական և աշխարհագրական մասերից և առանձնացրել է երկրորդը՝ աշխարհագրականը (1842 թվականի իր հրատարակության մեջ): Իրականում, եթե չհաշվենք առաջին և երկրորդ գլուխները, որոնք կարելի է ընդհանուր համարել ամբողջ աշխատանքի համար, մնացած աշխատանքում երկու բովանդակային մասերը հեշտությամբ կարելի է բաժանել: Հետևաբար Վրաստանի աշխարհագրական նկարագրության մասը կարելի է դիտարկել և ուսումնասիրել որպես առանձին աշխատություն: Աշխատանքը գրելիս օգտվել ենք հետևյալ հրատարակությունից՝ յանտոլոս ցեռըրըծա, Թոմո 4, Ֆաթոնիթջուլու ճախըթի աճբըրա Նամեյլոսա Նախարտջեղոսա, տծուլոս, 1973:

⁴ Տե՛ս Вахушти Багратиони, История Царства Грузинского, перевод Н. Т. Накашидзе, Тбилиси, 1976, с. 8.

⁵ Աբոց՝ այժմ Աշոցք, Աբոց, Աբոցի, Աշոց, Աշոցաց, Աշոցա տերություն, Աշոցի գավառ, Աշվան, Աշուշ, Ապոց, Արջոցան, Գայթուլի, Գաշոց, Գաշոցյան – Գավառ Մեծ Հայքի Այրարատ աշխարհում, նրա հյուսիսային մասում: Սահմանակից էր Տաշիրքին, Շիրակին, Ջավախքին և Կանգարքին: Համապատասխանում է ներկայիս ՀՀ Շիրակի մարզի հյուսիսային մասին: Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, Ա-Դ, Ե., 1986, էջ 296:

բաժանում է Իրջան² լեռը՝ Կարագաջի կամ Ղարախաչ³, որը մշտապես ծածկված է ձյունով, անտառազուրկ է, գառիվեր հատվածներում ծածկված է մարգագետնով, իսկ տեղադրությունը հյուսիսից հարավ է: Այստեղ արդյունահանվում է սպիտակ քար, որը նման է մարմարի:

Այս լեռան արևմտյան հատվածում գտնվում է Աբոցը⁴, որը այժմ կոչվում է Կայկուլ կամ Ղայղուլ⁵: Այն բոլոր կողմերից շրջապատված է լեռներով: Մրգեր չեն աճում: Կան հացահատիկի դաշտեր: Անասունների քանակը մեծ է խոտի առատության պատճառով (այս մասին է վկայում նաև Վախուշտիի բնական գոտիները ներկայացնող քարտեզը)⁶: Ձկների քանակը շատ քիչ է: Տարածքում քաղաքային բնակավայր է եղել ոչ մեծ Ղազանջին⁷: Պալակացիոյի⁸ ու Աբոցի միջև Աղաբաբա⁹ լեռն է, որը սահման է ծառայում Կարսի և Քարթլիի միջև և հասնում է Թեթր-ցիխեին¹⁰ ու Տաշաղան¹¹ լճին: Ավերված Աբոցը վերականգնել է 94-րդ արքա Վախթանգը: Սակայն այժմ այն պատկանում է Շահ Նադիրին: Տարածքի բնակիչները հավատքով հայեր են՝ գեղեցիկ և հաղթանդամ, տարօրինակ հագուկապով՝ տաշիրցիների նման, բայց պիտանի պատերազմների և արշավանքների ժամանակ¹²:

Տարածքների նկարագրման այս մեթոդը հանդիպում է նաև Վախուշտիի աշխատության այլ երկրամասերին վերաբերող հատվածներում: Միևնույն ժամանակ պետք է հավելենք, որ Վախուշտին տարածքը նկարագրելիս բերում է տարածքների ինչպես իրեն ժամանակակից թուրքական, այնպես էլ նախկինում տրված հունական և այլ անվանումներ: Սա խոսում է հեղինակի օգտագործած խիստ բազմազան աղբյուրների մասին, ինչպես իր համար ժամանակակից թուրքական, այնպես էլ ավելի վաղ շրջանի՝ հունական:

Ինչ վերաբերում է գավառի էթնիկ կազմին, պետք է նշենք, որ չնայած պատմագիտական գրականության մեջ երբեմն հանդիպող կարծիքին, թե իբր հայ բնակչությունը այս տարածքում մեծամասնություն չի եղել, 1720-1730-ական թվականների աղբյուրները հաստատում են հակառակը: 1723 թ. օսմանյան սերասկյարի և

¹ Բերուջ Վախուշտին անվանում է Դեբեդ գետի սկզբնական հոսանքի հատվածը: Տե՛ս Марашили Л., Вахушти Багратиони, его предшественники и современники, Москва, 1956, карта вкладыш из Второго (1742-1743) атласа Вахушти, «Карта Картли к югу от реки Куры.»

² Իրջան լեռ, Իրջան, Ղարախաչ – Լեռ Ջավախքի լեռնաշղթայի արևելյան կողմում, նախկին ՀՍՍՀ Կալինինոյի շրջանում, ներկայիս Տաշիր քաղաքի մոտակայքում: Հիշատակում են Վախուշտին ու Իբեթ Բարաթաշվիլին: Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, Դ-Կ, Ե., 1988, էջ 550:

³ Այս լեռը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի հյուսիսում, լեռնալանջերը հայտնի են որպես արոտավայր և ժողովրդի շրջանում անվան այս ձևը մինչև այսօր էլ գործածվում է:

⁴ Աբոց ավան Մեծ Հայքի Այրարատ աշխարհում, Աշոցք գավառի կենտրոնը: Տե՛ս «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, Ա-Դ, էջ 296:

⁵ Գյուղ Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառում, Խորհրդային շրջանում Ղայղուլի, ներկայումս՝ Աշոցք: Տե՛ս «Հայաստանի և Հարակից շրջանների տեղանունների բառարան», հ.2, Կ-Չ, Ե., 1991, էջ 513:

⁶ Քարտեզը տե՛ս Матурели И. В., Материалы по грузинской картографии, Тбилиси, 1961, карта между страницами 48 и 49, часть карты номер 5 из рукописного атласа Вахушти 1745 года.

⁷ Ղազանջի, Կազանջի, Ղազանջի-Ղայղուլ: Գյուղ ՀՀ Շիրակի մարզի հյուսիսում, Գյումրի-Ախալքալաք ավտոճանապարհի վրա: Գյուղի տեղում հնում գտնվում էր Աշոցք ավանը՝ Այրարատ աշխարհի համանուն գավառի կենտրոնը: Տե՛ս նույն տեղում, էջ 497:

⁸ Ծովակ Հյուսիս, Բալակացիոս, Ծովակ, Ըրլոր, Չալոր, Չալդր գյուղ, Չալդիր, Չալոր, Չլորի լիճ.... Պալակացիոս, Պալակացիոս – Լիճ Հայկական լեռնաշխարհում, Կուր գետի վերին հոսանքի աջ կողմում, Կարս քաղաքից մոտ քառասուն կիլոմետր հյուսիս: Մովսես Խորենացին հիշատակում է Ծովակ Հյուսիս ձևով, վրաց աղբյուրներում հիշատակվում է Ցելի ձևով... : Տե՛ս «Հայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարան», հ. 4, Պ-Ֆ, Ե., 1998, էջ 861:

⁹ Հայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարանում Աղաբաբա է կոչվում նախկին ՀՍՍՀ Ամասիայի շրջանը, որի տեղադրությունը համապատասխանում է հողվածում ուսումնասիրվող տարածքին, հետևաբար կարելի է ենթադրել, որ Վախուշտին այս դեպքում ևս նկատի է ունեցել Ջավախքի լեռնաշղթայի գագաթներից մեկը: Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, Ա-Դ, 1986, էջ 209:

¹⁰ Սպիտակաբերդ, տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ.4, Պ-Ֆ, Ե., 1998, էջ 35:

¹¹ Լիճ Հայկական լեռնաշխարհում: Տե՛ս նույն տեղում: Հեղինակի նկարագրած լճի տեղադրությունը համընկնում է ներկայիս ՀՀ Շիրակի մարզի հյուսիս արևմուտքում գտնվող Արփա լճին, որից սկիզբ է առնում Ախուրյան գետը: Խորհրդային շրջանում այս ոչ մեծ լճի վրա կառուցվել է ամբարտակ:

¹² Տե՛ս ვახუშტი ბავრჯიძის, საქართველოს გეოგრაფია, თბილისი, 1904, გვერდი 40: Տե՛ս նաև Царевич Вахушти, География Грузии, Тифлиси, 1904, с. 38.

Ղայդուլիի նահիեյի¹ հայկական 31 գյուղերի քաղխուդանների միջև ստորագրվել է ինքնական հպատակության համաձայնագիր²: Այս համաձայնագրի համար 1735 թ. Նադիր խանը դեպի Խորասան բռնագաղթի ենթարկեց Կարսի, Բայազետի, Կաղզվանի, Մամրվանի, Ջավախքի, Չըլդըրի և Ղայդուլիի 6000 հայերի³: Այս իրադարձությունների վերաբերյալ Աբրահամ Կրետացին նշում է. «Եվ գերեցին գՆարիմանու նահանգն, գՋավախեթու, գՉլտրու և գՂայի Ղուլու, որք էին բովանդակ ի մեր ազգէ»⁴: Նույն փաստաթուղթը խիստ կարևոր է այն տեսանկյունից, որ ներկայացնում է տարածքի գյուղերի ցանկը՝ նշելով քաղխուդանների անունները.

Աղբուլաղ գյուղի քաղխուդա՝ Ավագի որդի Բաբի
Ջիգարաշեն գյուղի քաղխուդա՝ Ուլիբեկի որդի Թամազ
Թարքաշ գյուղի քաղխուդա՝ Մխիի որդի Մինաս
Վերին Օրթուլի գյուղի քաղխուդա՝ Գրիգորի որդի Անանիա
Ներքին Օրթուլի գյուղի քաղխուդա՝ Շահնագարի որդի Օսեփ
Ղզլդղոջ գյուղի քաղխուդա՝ Նարիմանի որդի Բարի
Ղազանչի գյուղի քաղխուդա՝ Պողոսի որդի Սարգիս
Խանբուլախ գյուղի քաղխուդա՝ Վարդանի որդի Օհան
Մելիք գյուղի քաղխուդա՝ Մելիքի որդի Մըսըր
Կուռիչայ գյուղի քաղխուդա՝ Բաջլուի որդի Ասլան
Ղուկաս գյուղի քաղխուդա՝ Ջանիբեկի որդի Շահրիման
Օրուսթար գյուղի քաղխուդա՝ Առաքելի որդի Սալիմ
Ղավագյուղ գյուղի քաղխուդա՝ Ավանեսի որդի Ղարագյոզ
Ալահվերդի գյուղի քաղխուդա՝ Մխիթարի որդի Ղանիել
Ղըզլդղոջ գյուղի քաղխուդա՝ Գրիգորի որդի Էմին
Քեշիշթափա գյուղի քաղխուդա՝ Տեր Հակոբի որդի Գրիգոր
Կազանչի գյուղի քաղխուդա՝ Խաչատուրի որդի Ավագ
Վալիքյանդ գյուղի քաղխուդա՝ Վալիդի որդի Ղազար
Մըսըրքյանդ գյուղի քաղխուդա՝ Ղամիրի որդի Սարգիս
Սարգիս գյուղի քաղխուդա՝ Կոստանի որդի Արուսին
Թաթոս գյուղի քաղխուդա՝ Թաթոսի որդի Օսեփ
Ղադրասքյանդ գյուղի քաղխուդա՝ Օսեփի որդի Կիրակոս
Քեշիշթյանդ գյուղի քաղխուդա՝ Քեշիշի որդի Ներսես
Վերին Ղվարզվար գյուղի քաղխուդա՝ Ղվարզվարի որդի Սարգիս
Ներքին Ղվարզվար գյուղի քաղխուդա՝ Մարտիրոսի որդի Շահրիման
Քուսիքյանդ գյուղի քաղխուդա՝ Մարտիրոսի որդի Գրիգոր
Ղուրզլի գյուղի քաղխուդա՝ Ղորջանի որդի Ղավրու
Ղազիքյանդ գյուղի քաղխուդա՝ Սարիջանի որդի Շարիջան
Բուլագքյադի գյուղի քաղխուդա՝ Ղարագյոզի որդի Հախնագար
Սուֆի գյուղի քաղխուդա՝ Գասպարի որդի Մերաբ
Բեկքյանդ գյուղի քաղխուդա՝ Թորոսի որդի Սարգիս⁵:

Պետք է փաստել, որ գյուղերի ավագների կատարյալ մեծամասնության անունները հայկական են՝ Մարտիրոս, Թաթոս, Մխիթար, Առաքել⁶ և այլն, և սա այն դեպքում, որ գյուղերի մեծ մասը ունեն ոչ հայկական ծագման անվանումներ: Սա իր հերթին խոսում է այն մասին, որ գյուղերի բնակչության բացարձակ մեծամասնությունը եղել են հայեր, քանի որ հակառակ դեպքում, հաշվի առնելով Օսմանյան կայսրությունում և Սեֆյան Պարսկաստանում առկա իրավիճակը և վերաբերմունքը ընդհանրապես քրիստոնյաների և մասնավորապես հայերի նկատմամբ, նույնիսկ գյուղի ավագի պաշտոնը

¹ Աշոցքի գավառ, տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս Փափագյան Հ., Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային քաղաքականության վերաբերյալ. «Բանբեր Մատենադարանի», № 16, Ե., 1994, էջ 197-198:

³ Авраам Кретацци, Повествование, Ереван, 1973, հայ. բնագիր, էջ 67:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 197-198:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 200:

հազիվ թե բաժին հասներ հայերին: Ինչ վերաբերում է Նադիր շահի 1735 թ. իրականացրած գաղթին նշենք, որ տեղեկությունը ևս արժանահավատ է, քանի որ նույն թվականին վերաբերող հիշատակության ենք հանդիպում վրացի մեկ այլ պատմաբանի՝ Սեխնիա Չխեիծեի «Թագավորների պատմությունը» աշխատությունում. «նոյեմբերին դատարկեց Գյանջան, Ղարաբաղը, Քարթլիի և Կախեթի քոչվորներին, Երևանը, Ղարսը, Ղայդուլին, Փամբակը և որքան էլ ուռումների թոփխանա էր մնացել, ուղարկեց Խորասան»¹: Վախուշտիի աշխատանքից մեջբերված հատվածում ևս կա հիշատակություն այն մասին, որ Աբոցը պատկանում է Նադիր շահին: Այստեղ Նադիրի կազմակերպած գաղթի մասին հիշատակության բացակայությունը չպետք է շփոթություն առաջացնի, քանի որ այս պարագայում Վախուշտին չի ներկայացնում ուսումնասիրվող տարածքի քաղաքական պատմությունը, քանի որ իր առջև չի դնում նման խնդիր ու այս պարագայում մեզ հետաքրքրող տեղեկության բացակայությունը Վախուշտիի մոտ լիովին տրամաբանական կարելի է համարել:

Ինչ վերաբերում է վերը նշված ինքնական հպատակության հրովարտակին փաստենք, որ դրանից հետո տեղի ունեցած իրադարձությունների մասին աղբյուրները լռում են: Սակայն հաշվի առնելով, թե ինչպիսի դիմադրություն ցույց տվեցին թուրքերին Հայաստանի մյուս հատվածներում՝ Երևանում, Սյունիքում², կարող ենք պնդել, որ այդ հրովարտակը հայկական կողմի համար արդյունավետ չէր, այլապես նման համաձայնության դեպքեր կունենայինք նաև թուրքական արշավանքի հետագա ընթացքում:

Իսկ ինչո՞վ կարելի բացատրել, որ այս տարածքը, լինելով հայաբնակ և բուն հայկական, ունի բազմաթիվ թուրքական, պարսկական տեղանուններ:

XVI դ. առաջին կեսին Պարսից շահ Թահմազը իր թիկունքն ամրապնդելու նպատակով շիա դավանանքի թուրքական զուլքադար ցեղախմբին պատկանող և մինչ այդ այն Սվազի շրջանից Շիրազ տեղափոխված բորչալու, դազախ, շամսադինլու, դաջար և այլ ցեղերի՝ մոտ երեսունհինգ հազար հոգի, բնակեցրեց լիովին հայաբնակ Լոռի, Փամբակ, Աղստև, Տավուշ, Ծոբոփոր, Գանձակ և այլ գավառներում³: Իսկ 16-րդ դարի կեսից պարսկական իշխանությունները այս հայկական գավառները իրենց տեղաբնիկ հայ բնակչությանը տվեցին թուրքական ցեղերի ցեղապետերին որպես ժառանգական տիրույթ⁴: Բացի այդ Երևանի և Նախիջանի խանություն տեղափոխվեցին քանդարլու, ռումլու, բայաթ և այլ թուրքական ցեղախմբեր, որոնց մի մասը ևս հաստատվեց Շիրակում ու Փամբակում⁵: Ի. Պետրուշևսկու բնութագրմամբ Տավուշը պարսկական պաշտոնական փաստաթղթերում սկսում է հիշատակվել որպես Շամսադինլու՝ Շամշադին⁶: Հավելենք, որ Կողբոփոր գավառը կոչվեց Ղազախ, իսկ Ծոբոփորը՝ Բորչալու, համապատասխան ցեղանունների անուններից: Այսպես առաջացան Ղազախի, Շամշադինի, Բորչալուի Փամբակի, Շորագյալի կամ Շիրակի սուլթանությունները⁷:

Այս եզրահանգումները տրամաբանական են, սակայն դրանց հիմնավորումը բավարար համարել չի կարելի՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: Մեր կատարած աշխատանքի ընթացքում պարզեցինք, որ Ի. Պետրուշևսկին տալիս է միայն ընդհանուր տեղեկություններ ուսումնասիրվող նյութի վերաբերյալ, իսկ Ս. Վիրաբյանի աշխատանքում որպես հղում նշած էջում նման տեղեկություն չկա: Խոսքը վերաբերում է Ի. Պետրուշևսկու՝ «Ուրվագծեր Հայաստանում և Ադրբեջանում ավատատիրական հարաբերությունների պատմությունից 16-րդ դարից 19-րդ դարի սկիզբը» աշխատանքին, որի 73-րդ էջին հղում է կատարել Ս. Վիրաբյանը: Մյուս կողմից այս եզրահանգման օգտին է խոսում այն հանգամանքը, որ Ի. Պետրուշևսկին շատ կարևոր տեղեկություններ է տալիս ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանում Օսմանյան և Սեֆյան պետություններից կիրառվող հողային քաղաքականության մասին:

¹ Տե՛ս Լևոն Սելիքսեթ Բեկ, Կրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան 2013, էջ 27:

² Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, Ե., 1972, էջ 156-157:

³ Տե՛ս Վիրաբյան Ս., Մեծ Ղարաքիլիսա, Հ. 1-ին, « Կան Արյան», 2002, էջ 69

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ Տե՛ս նույն տեղում:

Այս համատեքստում է նա նշում, որ դազարլու, շամսադինլու և այլ ցեղեր ճյուղավորվեցին և սեփական տիրույթներ ու անասնապահության համար տարածքներ ստացան շահական պետության տարբեր տարածքներում: Նա ևս նշում է, որ այս իրադարձությունները տեղի են ունեցել Թահմազ շահի օրոք¹: Ի. Պետրուշևսկին լիովին հիմնավորում է, որ նշված ցեղերը այս տարածքները ստացան որպես ժառանգական տիրույթ: Եթե հաշվի առնենք, որ այս ցեղերի առաջնորդների մեծ մասը կրում էր սուլթան² տիտղոսը, ապա հաստատվելով իրենց տրված տարածքներում, այս ցեղերի առաջնորդները հիմնում էին սուլթանություններ³, ինչը տարածված երևույթ էր այս շրջանում և որոնց մասին էլ նշում է Ս. Վիրաբյանը⁴: Ղա ավատատիրության ընդունված ձև էր Սեֆյան Պարսկաստանում⁵: Եթե հաշվի առնենք, որ այս ժառանգական տիրույթները անվանափոխվում էին և ստանում նորաբնակ կամ որպես տարածք ստացած ցեղերի անուններով, ապա պարզ է դառնում, թե որտեղից են եկել ուսումնասիրվող տարածքի թյուրքական, պարսկական և քրդական տեղանուններ: Այս համատեքստում հարկ ենք համարում հավելել, որ հետագայում ո՛չ ցարական Ռուսաստանը, ո՛չ Հայաստանի առաջին հանրապետությունը և ո՛չ էլ ԽՍՀՄ-ը խնդիր չէին դնում փոխել այդ օտարածին անունները: Որպես հետևանք նույնիսկ այսօր ունենք բազմաթիվ բուն հայկական տարածքներ նման անվանումներով, որոնք, լինելով պատմականորեն հայկական տարածք, լինելով հայաբնակ, կրում են օտար անուններ:

Արքայազն Վախուշտի Բագրատիոնի կողմից ուսումնասիրվող հատվածի նկարագրությունը շատ ճշգրիտ է, և ստեղծում է տպավորություն, որ կա՛մ հեղինակը եղել է այս տարածքում, կա՛մ էլ աղբյուրները, որոնցից նա օգտվել է եղել են հավաստի: Ուղիղ հիշատակություն չկա այն մասին, որ Վախուշտին եղել է այս տարածքում: Այդ մասին չկա նշված ո՛չ նրա աշխատանքներից որևէ մեկում և ո՛չ էլ Վրաստանում և նրա հարակից շրջաններում նրա կատարած ճանապարհորդությունների մասին աշխատանքներում⁶: Սա ևս շահեկանորեն խոսում է Վախուշտի կատարած աշխատանքի արժեքի և որակի մասին: Քանի որ հեղինակը, անձամբ չայցելելով այս տարածք, բազմապիսի աղբյուրների համադրմամբ կարողացել է կատարել իր ժամանակի համար բավականին ճշգրիտ ուսումնասիրություն:

Այսպիսով՝ հիմնվելով մեր ունեցած տեղեկությունների վրա՝ կարող ենք նշել, որ 17-րդ դարի վերջին և 18-րդ դարի առաջին քառորդին պատմական Այրարատ նահանգի Աշոցքի գավառում հայ ժողովուրդը շարունակում էր լինել հիմնական էթնիկ խումբը, չնայած հարևան հզոր պետությունների քաղաքականությանը, որը միտված էր հայաթափել տարածքը: Սակայն պետք է հավելել, որ այդ քաղաքականությունը ամբողջովին չձախողվեց, և այդ ուժերին հաջողվեց որոշակի հաջողությունների հասնել և օտարածին տեղանունների տեսքով անջնջելի հետք թողել ժողովրդի հիշողության ու տարածաշրջանի տոպոնոմիկայի վրա:

Давид Карапетян, Ашоцкий регион в первых десятилетиях XVIII века по сведениям Вахушти Багратиони,- Грузинский автор Вахушти Багратиони в своих работах оставил очень важные сведения по истории и исторической географии об Ашоцкском регионе. Сопоставив эти сведения с другими источниками того же периода можем сказать что в указанный период Ашоцкий регион несмотря на натиск и с османской и с персидской стороны, а также со стороны тюркских племен, продолжал оставаться армянским с коренным армянским населением.

¹ Տե՛ս Սեֆյան Վախուշտի, Օчерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в 16-ом – начале 19-ого вв, Ленинград, 1949, с. 94:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Վիրաբյան Ս., նշվ. աշխ., էջ 69:

⁵ Տե՛ս Սեֆյան Վախուշտի, նշվ. աշխ., էջ 95.

⁶ Այդ ճանապարհորդությունների քարտեզը տե՛ս Վ. Բ. Մатурели И. В., Материалы по грузинской картографии, Тбилиси, 1961, с. 29.

David Karapetyan, The region of Ashotsk in the first decades of the XVIII century according to Vahushti Bagrationi,—The Georgian author Vahushti Bagrationi left in his works very important information on the history and historical geography of the Ashotsk region. Comparing this information with other sources of the same period, we can say that in this period the Ashotsk region, despite the onslaught from both the Ottoman and Persian sides, as well as from the side of the Turkic tribes, continued to remain Armenian with the indigenous Armenian population.